կ'անցնին Յեւրոպա, որոց արժանաւոր առաջնորդը «Գաւազանն բարկութեան Երկնից» Ատտիլաս, ի ճանապարհին այլ շատ քաղաքներ ենթարկելով Թէոդոսիոյ ճակատագրին՝ կը հասնի Իտալիա։

Հարիւր և աւելի ևս տարիներ, Թէոդոսիա, նոյն և ամբողջ Տաւրիա՝ աւերակաց ներքև կը մնան։

501 ին կ'արշաւեն ի Տաւրիա Յոսիոյ Ուգրացիք և Բուլղարք. սոցա կարճատև տիրապետութեան վերջ կուտայ կայսրն Յուստինոս Ա. դարձեալ զՏաւրիա Հռովմայեցւոց իշխանութեան ենթարկելով. ծովահայեաց շատ տեղուանք կայսեր շինել տուած բոլորաձև բերդերուն, նոյն ձևով, աշտարակները ցարդ կանգուն կեցած են[1]։

Ի վերջին կէս Է դարու՝ մի նոր ժողովուրդ ևս մուտ կը գործէ ի Տաւրիա, Կազար կամ Խազար անուամբ։ Այս ազգը, համեմատ իւր երկրագործ բարուց, երկար միջոց ժամանակի կը տիրէ Տաւրիոյ դաշտային մասանց և Օրի դռնէն ևս դուրս կ'ընդարձակէ իւր իշխանութիւնը. տակաւ կը բազմանան սոքա, այնպէս որ Տաւրիա, փոխելով անունը Կազարիա (Ghazaria) կամ Խազարաց աշխարհք կը կոչուի։ Սոցա շահաստանը կը լինի մօտ այժմեան հին Ղրիմու, Կազարաթ, երբեմն կոչուած մեծ աւանը. մեք այժմ այդ մեծ աւանին սակաւաւոր նշխարք կամ մնացորդք միայն կարող եմք նշմարել, ի հին-Ղրիմէ ցՍուտաղ տանող ճանապարհին վերայ, և այն դետնին հաւասարած հիմունք և քարինք հին շէնքերու, որք մօտաւոր ա-

1. Ինչպէս ի Հալուշդա, Ղրիմու հարաւային ափանց վերայ։